ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրեն՝ _____ Ք. Լևոնյան

«__» սեպտեմբեր 2022թ.

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Կոտայքի մարզի ք. Հրազդանի

Վ. Սարոյանի անվան N11 հիմնական դպրոցի Vդ դասարանի

դասղեկ՝ Ս. Ներսիսյան

2022-2023 ուստարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1 Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

5-րդ ,, դ,, դասարանում սովորում է 32 աշակերտ,15 տղա և 17 աղջիկ: Բոլորն էլ մեծացել և դաստիարակվել են առողջ և ապահով ընտանիքներում: Բոլորն էլ ընկերասեր են և սիրում են ազատ ժամանակը միասին անցկացնել: Դասարանում իշխում է համերաշխությունը, հարգանքը՝ միմյանց և ուսուցիչների հանդեպ:

Աշակերտները ցուցաբերում են տարբեր կարողություններ, ընդունակություններ և հմտություններ: Կան աշակերտներ, իհարկե , որոնք ունեն թույլ կարողություններ, բավականին լուրջ բաց թողումներ ինչ-ինչ պատճառներով: Նրանց հետ տարվում է հետևողական , շարունակական աշխատանք:

Երեք աշակերտներ ԿԱՊԿՈՒ աշակերտներ են:

2 Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում:

1. Ուշադրություն դարձնել դասարանական կոլեկտիվի համերաշխությանը:
2. Ձևավորել առողջ ապրելակերպի վարքագիծ:
3. Դաստիարակել հայրենասիրություն, հարգանք մեծերի հանդեպ:
4. Օգնել աշակերտներին զարգացնել սեփական կարողություններն ու հմտությունները, ինչը կնպաստի նրանց՝ հասարակության մեջ արդյունավետ ինտեգրմանը:
5. Ուշադրություն դարձնել աշակերտերի նախասիրություններին:

3 Հայեցի դաստիարակություն

3.1. Հոգևոր դաստիարակությունը

այս տարիքում շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորման, ինչպես նաև մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Այն նպատակ ունի բարոյական արժեքներ սերմանելու: Այդ իսկ պատճառով աշակերտին պետք է գաղափար տալ քրիստոնեության մասին, ծանոթացնել հոգևոր կենտրոնին ՝ էջմիածնին:

3.2. Գեղագիտական դաստիարակությունը

Սերն ու հարգանքն է գեղեցիկի նկատմամբ: Մարդը դեռ վաղ հասակից սկսում է գնահատել իր շրջապատը և շրջապատող միջավայրն իր բոլոր դրսևորումներով: Գեղագիտական դաստիարակությունը կազմում է մարդու ընդհանուր զարգացման զգալի մասը:

3.3. Ռազմահայրենասիրական դաստիարակությունը

Գրագետ, հոգեպես ու ֆիզիկապես կոփված, բանակի մասին տեղակայված ու պատրաստված սերունդ դաստիարակելու գործընթաց է: Հետևաբար՝ մեր առաջնահերթ

խնդիրն է աշակերտների մեջ ձևավորել ռազմահայրենասիրական ոգի։ Ձևավորել քաղաքացի, ով կլինի հայրենասեր և կկարևորի հայրենիքի դերը իր կյանքում։

3.4. Ֆիզիկական դաստիարակությունը

Ուղղված է առողջության ամրապնդմանն ու պահմանմանը, մարդու մտավոր և ֆիզիկական կարողությունների զարգացմանը։ Այն իրենից ներկայացնում է մշակույթի մի մաս, որն ընդգրկում է մի շարք արժեքների ու գիտելիքների համադրում։

3.5. Աշխատանքային դաստիարակություն

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ միայն ազնիվ աշխատանքով կարող է վաստակել հանապազօրյա հացը։ Աշակերտները պետք է պատրաստ լինեն հանրօգուտ աշխատանքի։ Տանը, դպրոցում և ամենուր պետք է պահպանեն մաքրություն։

3.6. Բնապահպանական դաստիարակություն

Ոչ միայն գիտելիքների ձևավորում է, այլև գործնական կարողությունների զարգացումը։ Աշակերտներին զինել բնության պահպանության վերաբերյալ գիտելիքներով։ Ձևավորել բնության հանդեպ հոգատար վերաբերմունք։ Ճանաչել և պահպանել բուսական և կենդանական աշխարհը։

3.7. Դպրոց-ընտանիք կապը

Ամուր հիմքերի վրա դնել դպրոց-ընտանիք կապը մասնակցել ծնողկոմիտեի հետ տարվող աշխատանքներին։ Հրավիրել ծնողական ժողովներ, քննարկել ընթացիկ հարցեր։ Անհրաժեշտության դեպքում կատարել տուն, այցելություններ։ Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են ապա հաղթանակն ապահովված է։

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս. շաբաթ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարող
1	Գիտելիքի օր	Դասղեկ
2	Կարևորենք լավ սովորելը /զրույց/	Դասղեկ
3	Հայաստանի զինանշանը դրոշն ու օրհներգը	Դասղեկ
4	Հայաստանը երգերի մեջ / ասմունք/	Դասղեկ
5	Շնորհավոր տոնդ սիրելի ուսուցիչ	Դասղեկ
6	Ես և իմ ուսուցիչները	Դասղեկ
7	Աշխատասիրություն և պատասխանատվություն	Դասղեկ
8	Աշխատանքն ազնվացնում է մարդուն	Դասղեկ
9	Մեր ընտանիքը	Դասղեկ
10	Մեր փոքրիկ բարոկամները	Դասղեկ
11	Ո՞վ է իմ ընկերը	Դասղեկ

12	Ինչպե՞ս լինել լավ ընկեր	Դասղեկ
13	Գրքերը, որ ես սիրեցի	Դասղեկ
14	Թվերի աշխարհում	Դասղեկ
15	Ես ուզում եմ երգել, պարել, ուրախանալ	Դասղեկ
16	Ինչպես հասնել հաջողության	Դասղեկ
17	Ամանորը սպասված տոն է	Դասղեկ
18	Մեր անունն է հայկական բանակ	Դասղեկ
19	Քառօրյա պատերազմի մեր քաջերը	Դասղեկ
20	Հայաստանի սահմանները	Դասղեկ
21	Ում կուզեի նմանվել	Դասղեկ
22	Երաժշտությունն իմ կյանքում	Դասղեկ
23	Իմ դպրոցը	Դասղեկ
24	Իմ ծնողները	Դասղեկ
25	Գալդ բարի գարուն	Դասղեկ
26	Մայրության և գեղեցկության տոն	Դասղեկ
27	Մայր իմ անուշ ու անգին	Դասղեկ
28	Ճանաչենք մեր շրջապատի բնությունը	Դասղեկ
29	Հայոց ցեղասպանություն	Դասղեկ
30	Ինչպես դրսևորել միջավայրում, տրանսպորտում	Դասղեկ
31	Առողջ հոգի, առողջ մարմնում	Դասղեկ
32	Մեր հաղթանակները	Դասղեկ
33	Ոչ ոք չի մոռացվի, ոչինչ չի մոռացվի	Դասղեկ
34	Ինչպես եմ անցկացնելու ամառը / զրույց/	Դասղեկ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	դասաժամը	Շաբաթվա օրը	Դասաժամը
Հինգշաբթի	7-րդ դասաժամ -14^{00}		

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցկացման օր	Քննարկվող հարցեր	Ժողովի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
07.09.22	1 Ծնողական խորհրդի ընտրություն 2 Աշակերտների պարտականությունները 3 Դասագրքերի ապահովվածությունկ 4 Ընթացիկ հարցեր		

ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

	ազգանուն, անուն, հայրանուն	Հասցե	Հեռախոս
Նախագահ	Ստեփանյան Ա.		
Անդամներ	1 Շուշան 2 Ալվինա		

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Անցկացման օր	Քննարկվող հարցեր	Ժողովի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
07. 09. 22	1 Նոր ուստարավա անելիքներ 2 Ընթացիկ հարցեր		

Դասագրքեր

Մաթեմատիկա - 400

Մայրենի - 400

Ռուսաց լեզու - 350

Հայրենագիտություն - 360

Հայ եկեղեցու պատմություն - 300

Ֆրանսերեն - 440

Անգլերեն –-/III դաս./

--/IV դաս./

Տեխնոլոգիա - 280

Բնագիտություն - 460

Երգ - 470

Դասագրքերի գումարի արժեքը մեկ աշակերտի համար կազմում է 3460 դրամ։

Անգլերենի դասագիրքը աշակերտին տրվում է անվճար։

Դասագրքերի ընդհանուր գումարը կազմում է 110320 դրամ /-1 դասագիրք՝ 2015թ/

ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ

1. Երեխաների թիվը դասարանում-32

   ա) աղջիկ՝15

   բ) տղա՝17

2. Անապահով ընտանիքների թիվը՝ 4

   Նրանցում՝ երեխաների թիվը՝2,3

3. Բազմազավակ ընտանիքների թիվը -1
   Նրանցում՝ երեխաների թիվը՝ 4

4. Ընտանիքներ, որտեղ ծնողները չեն աշխատում-3

5. Խնամակալության տակ գտնվող երեխաների թիվը՝0

6. Դասերից հաճախակի բացակայող երեխաներ -1

Դասղեկ՝_____/Ս. Ներսիսյան/